

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ

Մոսկուայի գեղարուեստական բասրոնը:—Ճարտարապետական ճորհած. —Մաքսիմ Գորկիյի «На дне» պիեսը Գեղարուեստական բասրոնի բեմի վրայ. —Այդ պիեսի համաձայն թուվանդակութիւնը. —Տիկին Սիրանոյշը Թիֆլիսում. —Աղաւեանի յիշատակին ցերեկոյք:

Անցած դեկտեմբերի 21-ին ես առիթ ունեցաւ տեսնելու Մոսկուայի Գեղարուեստական թատրոնի բեմի վրայ Մաքսիմ Գորկիյի «На дне» պիեսը, որ առաջին անգամ ներկայացրուեց նոյն թատրոնում դեկտեմբերի 18-ին և մեծ աջողութիւն ունեցաւ, դառնալով հեղինակի համար մի կատարեալ տրիումֆ: Մի քանի օր չանցած «На дне»-ն արդէն ներկայացրուեց Բերլինում, և տաղանդաւոր ուսուցիչ հեղինակը արժանացաւ Գեթթէի և Շիլլերի հայրենակիցներից ոգևորուած հեռագրական շնորհաւորականների...

Գեղարուեստական թատրոնը, ուր ներկայացրուեց առաջին անգամ Գորկիյի այդ երկրորդ պիեսը, (ինչպէս որ ներկայացրուել էր և նրա առաջին պիեսը—Мещане-ն) ահա մի քանի տարի է արդէն, որ գոյութիւն ունի Մոսկուայում և իր տեսակի մէջ մի և զակի երեւոյթ է ժամանակակից Ռուսաստանի մտաւոր-գեղարուեստական կեանքում:

Գեղարուեստական թատրոնի գերասանական խմբի գլուխաւոր կազմակերպող—դեկադարը և կարելի է ասել ոգին պ. Ստանիսլաւսկին է, մի հարուստ, կրթուած ու նուրբ ճաշակի տէր անձնաւորութիւն, որի իսկական ազգանունը Ալեքսէեւ է (միջին կրթութիւնը ստացել է Ղազարեան ճեմարանում): Ստանիսլաւսկին ոչ միայն իրէալական բեմիսեսոր *) է, այլ և տաղան-

*) Երկրորդ բեմիսեսորը յայտնի գրող Նեմիրովիչ-Պանչենկօն է:

դաւոր դերասան, նշանաւոր դրամատուրգների երկերի ոգին ու տրամադրութիւնը նուրբ և խոր կերպով մեկնող գեղարուեստագէտ:

Գեղարուեստական թատրոնը ներկայացնում է միայն տեւողական նշանակութիւն ունեցող երկեր. Իբսէն, Հաուպտման, Չեխով, Տօլստոյ, Գօրկիյ—ահա նրա սիրած հեղինակները: Ամբողջ սեզօնի ընթացքում նա տալիս է ընդամենը 6—7 պիես, սակայն իւրաքանչիւրը դրանցից ներկայացնում է մի սեզօնի ընթացքում մի քանի տասնեակ անդամներ և Մոսկուայի ողես հասարակութիւնը երբէք դատարկ չի թողնում այդ բարձր գեղարուեստական տաճարը:

Գեղարուեստական թատրոնի դերասանական խմբի կենդանի, անգամ իր չնչին մանրամասնութիւնների մէջ խոր մտածուած խաղը և մինչև իրական կեանքի կատարեալ իւլլիզիա ներկայացնող գեկօրացիաները, հաղուստը և այլն՝ դուքս են բերում բեմական արուեստը իր ամբողջ սպառազինութեամբ՝ դրամատուրգների ստեղծագործութիւնները կատարեալ կերպով ընդհանրութեան սեփականութիւն դարձնելու համար:

Գեղարուեստական թատրոնը այժմ գետեղուած է Գազետ-նայա կոչուած փողոցում, Լիանոզովի տան մէջ:

Թատրոնի հէնց մուտքից ձեր ուշադրութիւնն է դրաւում նրա ներսում տիրող ուրոյն ճարտարապետական ոճը: Այդ նոր, մօղերն ոճը միանգամայն համապատասխանում է Գեղարուեստական թատրոնի լուրջ, ինտիմիդենս ուղղութեան, կիրթ, նուրբ ճաշակին:

Ժամանակի հետ փոխւում են մարդկանց աշխարհահայեցողութիւնը, ճաշակը. ամեն բանի մէջ ինքնուրոյն այդ թատրոնը չ'ուզեց ճարտարապետութեան մէջ ևս կրկնել հին ոճերը. կլասիկ, բիւզանդական, բօմանական, դօթական, րենեսանս, րօկօկօ, և այլն, որոնք շեղեցիկ լինելով հանդերձ արդէն անցած դնացած օրերի արդիւնք են և այժմ մեր սրտն քիչ բան ասող ձևեր են. նոր մարդը, նոր ժամանակը պահանջում են նաև նոր խօսք, մարդկային աւելի նուրբ յոյզեր արտացոլող ձևեր, գեղարուեստական նոր ճաշակ: Այդ ժամանակակից, մօղերն ուղղութիւնը բանաստեղծութեան և նկարչութեան մէջ այնքան անաջող փորձեր ունեցաւ, որ մկրտուեց դեկադանս ծաղրանունով: Բայց այդ նոր ուղղութեան փորձը ճարտարապետութեան մէջ յամենայն դէպս ծիծաղելի չէ և նոյն իսկ չատաջող, ինչպէս այդ կարելի է տեսնել հէնց այս թատրոնի ներսի ճարտարապետութիւնից:

Գեղարուեստական թատրոնը ներքուստ ամբողջապէս մօղերն ոճով է շինուած ու զարդարուած: Մօղերն ոճը ճարտարապետութեան մէջ անպաճոյճ է և լուրջ: Նա յիշեցնում է մաքուր ու պարզ ճաշակով հաղնուած մի ինտելիգենտ կին, որ ցանկանում է դիմացինի մէջ մտածող տեսնել և ոչ իր մարմնի հրապույրներով զմայլուած տղամարդ, ինչպէս այդ անում է շրճայլօրէն պճնուած կօկետուհին: Բօկօկօ ոճը այդ կօկետուհուն է յիշեցնում...

Գեղարուեստական թատրոնի օրնամենտների մէջ գուք չէք գտնի օրգանական ձևերի (տերև, պտուղ, ծաղիկ, կենդանիներ, դէմքեր և այլն) նմանութեամբ շինուած դրուագներ, այլ միայն դժերից, քառակուսիներից, խորանարդներից և այլ գեօմետրիկական ձևերից զարդարանքներ: Դուք չէք գտնի այդ թատրոնում վառ գոյն, մարմար, ոսկի, բրոնզ, թաւիչ, ապրեշում, այլ ամեն բան աւելի պարզ և համեստ նիւթերից. գոյները մեղմ, պատկերները հասարակ շրջանակներում, նստարանները և սիւները փայտէ, դրուագաւոր ճոխ ջահերի տեղ հասարակ, խորանարդաձև կաթնպօղն լուսամտիւններով ծածկուած ելեկտրական լամպեր:

Արդէն նստած եմ իմ տեղում: Թատրոնը ծայրէ ի ծայր լի է: Բեմը ծածկուած է գորշագոյն վարագոյրով, որի միակ զարդարանքը նրա մէջտեղում, մի փոքրիկ քառակուսիի մէջ դեկորենտական ոճով նկարած թևատարած մի ուրուրն (чайка) է. այդ էմբլէմը նկարուած է նաև տոմսակների ու աֆիշաների վրայ:

Վարագոյրը միջից երկփեղկ բացուեց: Ապրեշուցիչ ընթալականութեամբ ներկայացրուած է մեր առաջ թշուառութեան այն որջը, որ յայտնի է միայն մեծ քաղաքներում, ուր մարդավայել բնակարան ունենալու համար պէտք է բախտաւոր ծնունդ: Այդ ապաստարանում (ночлежка) գլուխ դնելու մի անկիւն են գտել քաղաքակիրթ հասարակութեան կեանքի «յատակում» գոյութիւն պահպանող «բոսեակները»:

Ինչպէս ովկիանոսի անդնդում, արեգակի լոյսից և ջերմութիւնից յաւիտեան զրկուած, զարհուրելի խաւարի և սառնամանիքի մէջ ապրում են բնութեան խորթ զաւակ արարածները, այնպէս և հասարակական կեանքի ամենաստոր խաւերում, գիտութեան և քաղաքակրթութեան բարիքներին անմաս, անհայդպիսի որջերում թշուառ գոյութիւն են պահպանում գոյութեան կուում խորտակուածները:

Բարեկեցիկները միայն հեռուից լսել են այդ թշուառների կեանքի մասին, մինչդեռ Գօրկին դրանց հետ աղ ու հաց է կերել և այժմ իր ղօրեղ գրչով դարձնում է ամբողջ քաղա-

քակիրթ մարդկութեան ուշադրութիւնը այդ անձանօթ աշխարհի վրայ:

Մեծ քաղաքի խուլ փողոցներից մէկում, մի հին տան ներքնայարկում է գետնեղուած այդ ապաստարանը: Կամարապատ, ցած, երկայն ու մռայլ այդ որջի բնակիչները զարթել են ծանր քնից: Առաւօտ է: Զախ, պատի մօտ, փալամներով բաժանուած մի մահճակալի վրայ, պառկած է մերձ ի մահ հիւանդ մի կին (Աննա), որի հազը և սիրտ մաշող տնքոցը չէ չարժում թշուառութիւնից բխացած և կոպտացած շրջապատողների զուլթը: Հիւանդի մօտ, մի սալի առաջ նստած, բանում է նրա մարդը, աղքատ մի փականագործ (Կլեշչ): Այդ մարդուկը դեռ ևս յոյս ունի իր աշխատանքով ոտի կանգնել, դուրս գալ այդ որջից: Այլ կերպ է մտածում ընդհանուր չոր թախտի վրայ պառկած, յօրանջող ու ճմրկտող Սատինը, հեռագրական նախկին ծառայողը, որ սպանել է իր քրոջ անպատուողին, նստել բանտում և այժմ հասարակական անարդարութիւնից զայրացած գտնում է որ աշխատասիրութիւնն ու չիտակութիւնը աւելորդ են գոյութեան կրուում: Այդ «ինտելիգենտը» սիրում է երբեմն երբեմն արտասանել անկապ, օտար գեղեցիկ խօսքեր. «տրանսցենդետալ, օրգանօն, Գիբրալտար»: Նրանից ոչ հեռու, աջ պատին կպած, փոքրիկ լուսամտի տակ, իր առանձին անկողնու վրայ նստած, բանում է «կարտուզնիկ» Բուքնօլը, ապաստանարանի փիլիսոփաներից մէկը: Պէտք է նկատել որ բոլորն էլ սիրում են փիլիսոփայութիւններ և դատողութիւնների անել այդ պիեսում, ինչպէս և Мѣшане-ի մէջ... Դրա անկողնու յետևում, տախտակներով պատած մի ծակուռի մէջ, քնած է գող Վայսկա Պեպելը: Ներքնայարկի տէրը, մի ժրատ, խանդոտ, անսիրտ ծերուկ, առաւօտ կանուխ պտտում է իր տէրութեան մէջ, յիշեցնում ապաստարանում անկիւններ վարձած այդ թշուառներից իւրաքանչիւրին ապառիկների մասին (կոպէկներ): Նա մօտեցել է գողի ննջարանի փակ դռն և ճեղքերից դիտում է ներսը: Սատինը հեղնում է և ակնարկում ծերուկի ջահել կնոջ՝ Վասիլիսայի և Վայսկայի սիրային յարաբերութիւնների մասին. գողը չէ սիրում այդ «անհողի» կնկան և աւելի համակրում է, նրա քրոջ Նատաշային: Այդ առիթ է տալիս խանդոտ Վասիլիսային շարունակ նեղել, կռուել, ծեծել Նատաշային: Որջի մի մութ անկիւնում, օձիքը վեր բարձրացրած մի հին վերարկուի մէջ, պղպած է ալկոհօլիկ գերասանը և իր անցեալ փառքով է երազում: Երբեմն զբոսից ներս է վազում ամեն ինչ գինու տուած, «գարմօնիկան» ձեռին, ոտաբորիկ Ալեօշան, այդ միշտ հարբած և միշտ ուրախ կոչկակարը, որի դեմիզն է „Ничего не хочу, ничето не желаю“: Ապաստարանի բնակիչներից է և

մի «ընկած արարած» (Նաստեա) որ ինքը հաւատացած է և իղուր է աշխատում նա և ուրիշներին հաւատացնել թէ ինքը մաքուր սէր էլ է ունեցել, սիրել է և սիրուել «պսպղուն կօշիկներ» ունեցող մի ուսանողից: Նաստեան շարունակ կարդում է բուլվարային րօմաններ և ոգևորւում այդ գրքերի ասպետներով: Այդ դէպքէն զգալիա նրա այժմեան սիրականին, որին բոլորը ծաղրելով «բարօն» են անուանում, որովհետեւ նա մի ժամանակ «իր սեփական ձիերն, կարէթան» է ունեցել, մի ժամանակ առաւօտները իր անկողնում սերով կաֆէ էր խմում, օրը մի քանի անգամ չորեր էր փոխում, պճնւում... Այդ անձերին աւելացրէք մի թաթար և մի ռուս բեռնակիր, փողոցներում կարկանդակ ծախող մի կին (Կվաշնեա) և ապաստարանիս տիրոջ ազգական՝ քաղաքապահ ոստիկանին (գօրօդօւօյ) և դուք կը ծանօթանաք НОЧЛЕЖКА-ի բոլոր բնակիչների հետ: Թղթախաղ, արեւցողութիւն, վիճաբանութիւն, սրախօսութիւն, երգ և այդ բոլորի հետ դատողութիւններ, զանազան հայեացքներ կեանքի և մարդկայնութեան մասին անցնում են ձեր ստաջ:

Ահա բարեկեցիկներից մոռացուած, իր ինքնուրոյն կեանքով ապրող այդ միջնաւայրի մէջ երևան է գալիս մի օտարական (Լուկա). ցուպը ձեռին, պարկը ուսին թափառում է նա առեն տեղ. շերտի վրայ բոլորս էլ անցաւորներ ենք, թէ նրանք, որոնք մի տեղում են ապրում և թէ նրանք, որոնք թափառում են. լսել եմ որ մեր երկիրն էլ երկնքում թափառաչլիկ է», աւսում է այդ բարեսիրտ, հեղ, մեղմ, սրախօս մարդը Մի քանի օր մնալով ապաստարանում նա դառնում է բոլորի սիրելին, առեն մէկին անփութ էլ յուսադրում, բարձրացնում իր աչքում, նրա մէջ մարդկային արժանապատուութիւն զարթեցնում. «բոլորն էլ ապրում են լաւագոյն ապագայի համար», «պէտք է յարգել մարդուն», «պէտք է խղճալ մարդկանց»,—ահա նրա ասածների խմատը: Եւ նա մխիթարում է ու սիրտ տալիս մեռնող Աննային, որ տառապանքներով լի իր ամբողջ կեանքում ծեծից, վիրաւորանքից, քաղցից դատ ուրիշ բան չի տեսել «Դու յոյս ունեցիր... ասում է Լուկան մեռնողին, ահա կը մեռնես և կը հանգստանաս, այլևս ոչինչ հարկաւոր չի լինի և փախենալու բան չը կայ, մահը ամեն ինչ հանգստացնում է... կը մեռնես կը հանգստանաս, որովհետեւ ուր այստեղ հանգստանայ մարդ... Աստուած կը նայի քո վրայ հեղութեամբ և սիրով և կասի. «Ես ճանաչում եմ այդ Աննային... Տարէք նրան դրախտ—Թող հանգստանայ... պիտեմ նա իր կեանքում շատ է տանջուել...»

Համոզում է նա և Վալսկա Պեպելին թողնել այդ սրճը և իր սիրած Նատաչաի հետ փախչել հեռու, Սիբիր, և այնտեղ նոր

կեանք սկսել: Նա յորդորում է և արիօնօրիկին բժշկուել իր ցաւից, դիմել արիօնօրիկ հիւանդների համար շինած հիւանդանոցը: Նա սիրովում է և Նաստեային. «Եթէ ինքդ հաւատում ես որ դու ունեցել ես իսկական սէր, ուրեմն այդ եղել է»:

Սակայն երկարատեւ չի լինում այդ օտարականի ազդեցութիւնը. երբ Վասիլիսան եւ եկած ջուր է ածում իր քրոջ ոտերի վրայ, վրէժ հանելով սիրականին խելութ համար, և ընդհանուր իրարանցման ժամանակ Պեպելը սպանում է ապաստարանի տէր ծերուկին, իսկոյն յանցանքի տեղն է գալիս պօլիցիան. և անցաթուղթ չունեցող Լուկան անհետանում է: Յաւեց իրան կորցրած Նատաշան յայտնում է ոստիկանին թէ Վասիլիսան և Վայսկան առաջուց պայմանաւորուել էին սպանել ծերուկին և այդպիսով ազատուել նրանից: Յանցաւորները կայանաւորւում են:

Լուկայի անհետանալուց յետոյ ապաստարանի մէջ, որին տէր են դառնում կարկանդակներ վաճառող կիներ և նրա հետ ամուսնացած «գօրօգօլօյը», վերսկսում է հին կեանքը. բոլորը յիշում են խելօք ու բարի օտարականի խօսքերը, վերաբերմունքը, մտաբերում է իւրաքանչիւրը իր անցեալը. դարձեալ թղթախաղ, արեւցութիւն, դատողութիւններ: Վերջում բոլորը սկսում են երգել մի սրտառու, տխուր և միաժամանակ ազատասէր երգ, որ ընդհատւում է «բարօնի» յայտնած բովով, թէ արիօնօրիկ դերասանը ինքն իրան կախեց:

Եւ կարողացայ հաղորդել ընթերցողին այդ զօրեղ գրուածքի միայն կմախքը, որովհետեւ Գօրկիի այդ պիեսը դեռ չի տրուած, ինկ յիշողութեանս մէջ, այն էլ մի ամիս անց, շատ բան ընականաբար, աղօտ կերպով է պահպանուել: Կարելի է համարձակ ասել, որ այլ բեմի վրայ երբէք այն աշողութիւնը չէր ունենալ «На дне»-ն, ինչ որ նա ունեցաւ Գեղարուեստական թատրոնի հռչակաւոր խմբի աննման խաղով և զարմանալի գրուածքով: Այդ երկը իսկապէս գրամա չէ սովորական մտքով, այլ հօր վրձինով նկարուած զարմանալի տեսարաններ, որոնք առիթ են տալիս հեղինակին հասարակութեան մէջ որոշ հայեացքներ արծարծելու:

Լ. Ս.

Յունուարի 9-ից սկսած հայոց դրամատիկական ընկերութեան խմբի ներկայացումներին մասնակցում է տիկին Սիրանոյշը:

Մինչև այս տողերս գրելը տիկին Սիրանոյշը բեմ է դուրս